ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/11

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի 30.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 30.01.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գեղարվեստական կոմպոզիցիաների ձեռքբերման» նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ մրցույթ): Մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 6,040,650 (վեց միլիոն քառասուն հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Ընկերությունը մրցույթին ներկայացված տուժանքի մասին հայտարարությանը կից վճարման պահանջագրի 12-րդ կետում մասնակցության հայտի ապահովման գումար նշել է 302,100 (երեք հարյուր երկու հազար հարյուր) ՀՀ դրամ:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 24.01.2018թ. ժամը 10.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով արձանագրել է հետևյալը.

«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, ներկայացված տուժանքի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված չափին (նշված գումարը գերազանցում է հրավերով սահմանված 5 տոկոսի չափը): Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով որոշեց մերժել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ձևավորում» ՓԲԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթ հրավերի (այսուհետ՝ հրավեր) 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Փաստորեն, ստացվում է, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է այն պատճառով, որ ներկայացված հայտի ապահովման գումարը 67,5 ՀՀ դրամով գերազանցել է հրավերով սահմանված հայտի ապահովման չափը՝ 5 տոկոսը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի գնային առաջարկը 1,934,350 ՀՀ դրամով ցածր է եղել «Ձևավորում» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկից:

«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժելով խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը՝ հայտի ապահովումը 67,5 ՀՀ դրամով ավել ներկայացնելով, բավարարել է հրավերով սահմանված հայտի ապահովման ներկայացման չափի նվազագույն պահանջը»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Խորհրդին ներկայացված Բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել Հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 10.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Ձևավորում» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. Պարտավորեցնել Հանձնաժողովին մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ին:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՄՈՐՄ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Վիլեն Դավթյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը 31.01.2018թ. դիմել է Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն Խորհրդին է ներկայացրել Բողոքի քննության համար անհրաժեշտ համապատասխան փաստթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Խորհրդին չի տրամադրվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Իրինա Եղիազարյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից 30.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.01.2018թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրությունը, «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գեղարվեստական կոմպոզիցիաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ): Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝ 24.01.2018թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով արձանագրել է, որ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, ներկայացված տուժանքի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված չափին (նշված գումարը գերազանցում է հրավերով սահմանված 5 տոկոսի չափը):

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը նույն կետով որոշել է մերժել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ձևավորում» ՓԲԸ-ին:

Նույն արձանագրության 1.5 կետի համաձայն՝ Ընթացակարգին «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի առաջարկած ընդհանուր գինը կազմել է 6,040,650 ՀՀ դրամ, իսկ «Ձևավորում» ՍՊԸ-ի առաջարկած ընդհանուր գինը՝ 7,975,000 ՀՀ դրամ:

«Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայտի ապահովման գումարը 67,5 ՀՀ դրամով գերազանցել է հրավերով սահմանված հայտի ապահովման չափը՝ 5 տոկոսը, անտեսելով այն հանգամանքը, որ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի

գնային առաջարկը 1,934,350 ՀՀ դրամով ցածր է եղել «Ձևավորում» ՓԲԸ-ի կողմից առաջարկված գնից:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում 30.01.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հավելեց, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը մերժելով, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը՝ հայտի ապահովումը 67,5 ՀՀ դրամով ավել ներկայացնելով, բավարարել է հրավերով սահմանված հայտի ապահովման գումարին ներկայացվող նվազագույն պահանջը:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ Ընկերության հայտը մերժել է վերջինիս կողմից ներկայացված տուժանքի գումարը 67,5 ՀՀ դրամով հրավերով սահմանված հայտի ապահովման չափը՝ 5 տոկոսը գերազանցելու հիմնավորմամբ, թեև նշեց, որ Հանձնաժողովն իր որոշումն ընդունելիս ղեկավարվել է բացառապես Ընթացակարգի Հրավերով սահմանված պահանջներով, մասնավորապես, Հրավերի 7.1 կետով, որի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի՝ իրավական ակտը պետք է մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի

ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում նշված գումարի չափը գերազանցում է Ընթացակարգի Հրավերով սահմանված հայտի ապահովման չափը:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատվել են բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը: Համաձայն վերը նշված օրինակելի ձևերի՝ բաց մրցույթի հրավերով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է նույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի համաձայն:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ եթե Հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին, իսկ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ն ըստ էության ապահովել է Հրավերով սահմանված պահանջը՝ հայտի ապահովման առավելագույն չափը, այսինքն, վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը պակաս չի եղել հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսից, ապա նման պայմաններում «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէ մերժման:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ և խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.1 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի կողմից 30.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել Հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 10.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Ձևավորում» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել Հանձնաժողովին՝ ընդունել «Ֆիոնա Ֆլորա» ՍՊԸ-ին մրցույթի առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ